ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՄԵԾԱՐՄԱՆ ԵՐԵԿՈՆԵՐ

Լրացավ ամերիկահայ անվանի բանաստեղծ, հրապարակախոս և հասարակական գործիչ Կարապետ Միտալի ծննդյան 70 և գրական գործունեության 50-ամյակը։ Նոյեմբերի 17-ին Հայֆիլհարմոնիայի համերգային փոքր դահլիճում տեղի ունեցավ հարելյարի մեծարման երեկոն, որին ներկա էին մեր ռեսպուբլիկայի մայրաքաղաքի հասարակայնության բազմաթիվ ներկայացուցիչներ գրողներ, գիտնականներ, արվեստի և կուլտուրայի աշխատողներ, ուսանողներ։ Նախագահությունում տեղեր էին գրավել Հայաստանի Կոմպարտիայի Կենտկոմի երկրորդ քարտուղար Հովհ. Բագդասարյանը, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի նախագահ Ա. Քոչինյանը, Հայաստանի սովետական գրողների միության վարչության առաջին քարտուղար Էդ. Թոփչյանը, գրողներ Ն. Զարյանը, Աբաղին, Գ. Սևունցը, Գ. Մահարին, Վ. Անանյանը, Ս. Կապուտիկյանը, Գ. Բորյանը, Վ. Նորենցը, հայ գեղանկարչության նահապետ Մ. Սարյանը և ուրիշներ։

Երեկոն ներածական խոսքով բացեց Էդ. Թոփչյանը, որը Կ. Միտալին բնութագրեց որպես արտասահմանի հայ դեմոկրատական գրականության ավագ սերնդի աչքի ընկնող ներկայացուցիչներից մեկը։ Ավելի քան հիսուն տարի է, ինչ Կ. Միտալը իր բեղմնավոր գրիչը նվիրել է Հայրենի գրականությանը։ Նա ստեղծել է բազմաթիվ պոեմներ ու բանաստեղծություններ, որոնք տոգորված են ջերմ սիրով դեպի աշխատանքի մարդն ու ճնշված ժողովուրդները։ Վաստակավոր գրողը իր ստեղծագործական կյանքը անց է կացրել Ամերիկայում, հայրենի հողից հեռու, բայց խոհերով ու զգացմունքներով միշտ էլ կապված է եղել իր ժողովրդի և վերածնված հայրենիքի՝ Սովետական Հայաստանի հետ։

Հարելյարի կյանքի և գրական գործունեության մասին զեկուցեց բանասիրական գիտությունների թեկնածու Հր. Գրիգորյանը։ Զեկուցումից հետո բազմաթիվ ջերմ ողջույններ հղորդվեցին անվանի բանաստեղծին. Հայկական ՍՍՌ Կուլտուրայի մինիստրության անունից հարելյարին ողջունեց մինիստրի տեղակալ Ա. Շահինյանը, Հայաստանի սովետական գրողների միության վարչության անունից՝ արձակագիր Հմ. Սիրասը, Աբրահամյան եղբայրների հետ բարեկամության և կուլտուրական կապի հայկական ընկերության նախագահության անունից՝ Սա. Կուրտիկյանը։ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի ուսանողության ողջույնը հարելյարին հաղորդեց Մ. Սանթուրյանը, «Ինստրուխտ» հայկական բաժանմունքի կողմից հանդես եկավ Պ. Մեսրոպյանը, Հայաստանի սովետական գրողների միության բրիգադի անդամի կողմից՝ Հ. Ջնդին։ Վերջում ձայնը տրվեց Կ. Միտալին։

— Իմ գիտակից, հասունացած տարիքի ավելի քան 80 տոկոսը,— ասաց Կ. Միտալը,— հայրենի հողից դուրս եմ անցկացրել։ Եվ սակայն խոհերով ու հույզերով ես իմ ժողովրդի հետ եմ եղել շարունակ։ Իմ սիրտը իմ ժողովրդի ցավի, նրա մաքառումների, նրա հաղթանակների, նրա շրջթի, նրա հոյակապ առաջընթացի հետ է բաբախել։ Ես այժմ կատարված եմ տեսնում իմ կյանքի անուշ երազը, իմ բոցավառ բաղձանքը՝ մեր ժողովրդին մեկ տան և մեկ հարկի տակ ժողովված տեսնելու երջանկությունը։ Իմ հարազատ, իմ մեծասքանչ ժողովուրդ, քո ինձ տված պատիվն ու մեծարանքը շրջել և անթառամ մի ծաղկեփունջ կապած՝ որդիական անկեղծ և անմար սիրով քո ոտների տակ եմ դնում։ Հավերժ փառք քեզ և քո նոր կարգերին, իմ պաշտելի, իմ հանճարեղ ժողովուրդ։

Ա. Գ.

* * *

Նոյեմբերի 23-ին ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի դահլիճում տեղի ունեցավ հին բոլշևիկ, ականավոր հասարակական գործիչ, բազմավաստակ գրականագետ, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Աստղիկ Կարինյանի ծննդյան 75-ամյակը նշանավորող մեծարման երեկո։ Հարելյարին ողջունելու համար հավաքվել էին հին բոլշևիկներ, գիտության ու կուլտուրայի ականավոր գործիչներ ու գրականագետներ, գրողներ, մայրաքաղաքի աշխատավորության ներկայացուցիչներ։

Երեկոն ներածական խոսքով բաց արեց ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի

ինստիտուտի հայկական ֆիլիալի դիրեկտոր, Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Ռ. Պ. Ադայանը։ Ապա հորելյարի կյանքի ու գործունեության մասին զեկուցումով հանդես եկավ պատմական գիտությունների թեկնածու Բ. Գալոյանը։

Կյանքի հոյակապ ուղի է անցել անվանի հորելյարը։ Մանկության ու պատանեկության տարիները նա անց է կացրել իր ծննդավայրում Բաքվում։ 1906 թ. նա Բրուտյան ծածկանունով աշխատակցում է բոլշևիկյան «Կայծ» թերթին։ 1907 թ. Կարինյանը ծանոթանում է Ստ. Շահումյանի հետ և նրա ցուցումներով ու ղեկավարությամբ անհաշտ պայքար է ծավալում հայկական բուրժուական նացիոնալիստական պարտիաների դեմ։

Բնութագրելով հորելյարի կյանքի ուղին, զեկուցողը նշում է, որ Կարինյանը պարտիական ու պետական աշխատանքը զուգորդել է գիտական գործունեության հետ։ Աշխատելով Անդրկովկասի տեղյուցիոն շարժման ականավոր գործիչների հետ ձեռք-ձեռքի ված, լինելով Բաքվի Կոմունայի արդարադատության ժողկոմ և մի շարք պետական պատասխանատու պոստեր գրավելով Հայաստանում սովետական կարգեր հաստատելու ժամանակներից ի վեր, Կարինյանը ժամանակ է գտել գիտահետազոտական աշխատանք կատարելու, գիտական կադրեր պատրաստելու և դաստիարակելու համար։ Կարինյանը մեծ աշխատանք է ծավալել հայ և եղբայրական մյուս ժողովուրդների մշակույթի արժեքները վեր հանելու, լուսաբանելու, մարքսիստորեն արժեքավորելու և պրոպագանդելու ուղղությամբ։ Զխոսելով նրա գրականագիտական բազմաթիվ աշխատությունների մասին, նշենք հատկապես հայ պարբերական մամուլի պատմությանը նվիրված նրա եռահատոր աշխատությունը (առաջին երկու հատորները արդեն լույս են տեսել), որը աչքի ընկնող ավանդ է հայագիտության գանձարանում։

Հորելյարին ողջունող ընկերները՝ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի փիցեպրեզիդենտ Ա. Հովհաննիսյանը, Երևանի Ստ. Շահումյանի անվան պետական համալսարանի Ս. Մուրադյանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրականության ինստիտուտի դիրեկտոր Գ. Հովնանը, փիլիսոփայական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Հ. Գաբրիելյանը, «Հայաստանի աշխատավորուհի» ամսագրի խմբագիր Ա. Սրիցյանը, ՀԿՊ Կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչ Վ. Ավետիսյանը, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Հ. Ասլանյանը և ուրիշները, դրվատելով հորելյարի ծառայությունները, նշում են, որ այսօր էլ նա ակտիվորեն մասնակցում է կոմունիզմի կառուցման գործին և ցանկանում են նրան բաջառողջություն և երկար տարիների կյանք։

Ընթերցվեցին հորելյարի հասցեով ստացված բազմաթիվ հեռագրեր։

Ապա ելույթ ունեցավ հորելյարը, որն իր ելույթը վերջացրեց հետևյալ խոսքերով.

— Շնորհակալություն այն ջերմ խոսքերի համար, որ ասվեցին իմ հասցեին։ Ես անչափ երջանիկ եմ զգում նրա համար, որ իրականացված եմ տեսնում այն լավագույն երազանքը, որի համար մարտնչել է բոլշևիկյան պարտիայի հին գվարդիան, գվարդիա, որի շարքերում աճել ու դաստիարակվել եմ ես։ Իմ ուժերն ու գիտելիքները այսուհետև ես չեմ խնայի իմ հարազատ ժողովրդին ծառայելու գործում։

* * *

Երևանի Պետական համալսարանի հայկական բանասիրական, ռուսական բանասիրական և օտար լեզուների ֆակուլտետի միացյալ գիտական խորհրդի նախաձեռնությամբ նոյեմբերի 25-ին տեղի ունեցավ ֆիլոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համազասպ Համբարձումյանի ծննդյան 80-ամյակին և գիտական-մանկավարժական գործունեության 60-ամյակին նվիրված մեծարման երեկո։

Երեկոն բաց արեց բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ. Մկրյանը։ Նա համառոտակի բնութագրեց հորելյարի անցած ուղին, արժեքավորեց նրա դրական-մանկավարժական վաստակը, նրա ծառայությունը հատկապես հին հունական դասական գրականությունը թարգմանելու և պրոպագանդելու առաջարկում։ Սակայն Համբարձումյանը հիշարժան ավանդ է դրել նաև հայագիտության առաջարկում, ինչպես այդ ընդգծեց հորելյարին ողջունող բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Սևակը։ Հորելյարին ողջունող պրոֆեսորներն ու դասախոսները՝ Մ. Մելիքյանը, Գ. Մոճոյանը, Ռ. Հովհաննիսյանը, Գ. Զուրարը և ուսանողներ Ա. Ջիգիթյանն ու Մ. Զաքարյանը իրենց ելույթներում ընդգծեցին հորելյարի ծառայությունները գիտական-գրական կադրեր պատրաստելու առաջարկում։

Մեծարման երեկոյի վերջում պատասխան խոսքով հանդես եկավ հորելյարը։ Նա շնորհակալություն հայտնեց մեծարման երեկոն կազմակերպելու համար և խոստացավ չխնայել իր ջանքերը կադրերի պատրաստման գործում։

Ա. Ա.